Անկախ աուդիտորի եզրակացություն և համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններ

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

«Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր»

ՎԶՄԲ Վարկ 8229-AM
ՎԶՄԲ Վարկ 8523-AM

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործմաան մասին հաշվետվություն	7
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	7
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	9
Հատուկ հաշվի հաշվետվություն	10
Համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

Հայաստանի Հանրապետության կառավարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում ֆինանսավորվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի» (Ծրագիր) կից ներկայացված համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, հատուկ հաշվի հաշվետվությունը՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որոնք ներկայացվել են Համաշխարհային Բանկ՝ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի»՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով, ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում համալրումների համար:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի լուսաբանում

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որը վերաբերում է հաշապահական հաշվառման հիմունքներին: Համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համապատասխան հոդվածների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարություններ տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

2017թ. հունիսի 22

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM և վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)		61,201,352	49,828,218
		61,201,352	49,828,218
Ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ	4	1,918,465	259,967
Մնացորդներ բանկային հաշիվներում	5	2,679,460	178,523
		4,597,925	438,490
Ընդամենը ակտիվներ		65,799,277	50,266,708
Ֆոնդեր և պարտավորություններ			
Ֆոնդեր			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)		53,601,025	49,503,617
Ծրագրի կուտակային ֆինանսավորում (վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)		11,346,304	-
Փոխարժեքային տարբերություն		89,426	88,204
		65,036,755	49,591,821
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	6	762,522	674,887
		762,522	674,887
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		65,799,277	50,266,708

Համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. հունիսի 22-ին:

Վարդան Կարապետյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լուսինե Միքայելյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահության մասնագետ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 11-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	Տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Ֆոնդերի աղբյուրներ							
Համաշխարհային բանկի ֆինանսավորում (տե՛ս ծանոթ. 7)							
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	3,333,153	42,970,669					
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	9,575,257	9,575,257					
Կառավարության համաֆինանսավորում (տե՛ս ծանոթ. 8)							
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	764,255	10,630,356					
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	1,771,047	1,771,047					
Ընդամենը	15,443,712	64,947,329					
Փոխարժեքային տարբերություն	1,222	89,426					
Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում							
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM							
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր (տե՛ս ծանոթ. 9)	3,412,664	53,128,382	6,426,918	56,679,768	(3,014,254)	(3,551,386)	56,109,375
Սկզբնավճար	-	112,500	-	112,500	-	-	112,500
Ընդամենը ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	3,412,664	53,240,882	6,426,918	56,792,268	(3,014,254)	(3,551,386)	56,221,875
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM							
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր և վերապատրաստումներ (բացառությամբ Ծրագրի Մաս 1(ե)) և 2 (բ) (ա)-ի (տե՛ս ծանոթ. 9)	7,860,470	7,860,470	9,153,817	9,153,817	(1,293,347)	(1,293,347)	49,900,000
Սկզբնավճար	100,000	100,000	100,000	100,000	-	-	100,000
Ընդամենը ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	7,960,470	7,960,470	9,253,817	9,253,817	(1,293,347)	(1,293,347)	50,000,000
Ընդամենը	11,373,134	61,201,352					
Շրջանառու կապիտալի զուտ աճ (տե՛ս ծանոթ. 10)	4,071,800	3,835,403	(15,680,735)	(66,046,085)	4,307,601	4,844,733	

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	Տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM							
Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	2,924,177	51,195,796	5,518,980	54,172,480	(2,594,803)	(2,976,684)	52,390,000
Ճանապարհի բարելավման աշխատանքներ	2,220,986	41,525,560	4,834,032	44,243,232	(2,613,046)	(2,717,672)	41,510,000
Հիմնանորոգման և պահպանության փորձնական պայմանագիր	67,525	5,600,786	29,000	5,562,400	38,525	38,386	6,760,000
Միկրոձեռնարկությունների միջոցով ընտրված հատվածների ընթացիկ պահպանություն՝ փորձնական հիմքով	-	-	-	-	-	-	170,000
Նախագծային ուսումնասիրություն և տեխնիկական հսկողություն	635,666	3,853,208	655,948	4,146,848	(20,282)	(293,640)	3,700,000
Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձացում և վտանգավոր հատվածների բարելավում	-	216,242	-	220,000	-	(3,758)	250,000
Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	488,487	1,932,586	907,938	2,507,288	(419,451)	(574,702)	3,719,375
Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը, ներառյալ աուդիտ	285,867	888,752	317,000	975,200	(31,133)	(86,448)	1,109,375
Ակտիվների կառավարման ճանապարհային համակարգ և հետազոտման սարքավորումների ձեռքբերում	-	219,352	369,666	685,516	(369,666)	(466,164)	500,000
Ճանապարհային երթևեկության անվտանգության տեխնիկական աջակցություն	-	-	-	-	-	-	250,000
Տեխնիկական աջակցություն	202,620	824,482	221,272	846,572	(18,652)	(22,090)	1,860,000
Ընդամենը ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	3,412,664	53,128,382	6,426,918	56,679,768	(3,014,254)	(3,551,386)	56,109,375
ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM							
Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	7,854,872	7,854,872	8,905,348	8,905,348	(1,050,476)	(1,050,476)	46,710,000
Ճանապարհի բարելավման աշխատանքներ	7,486,628	7,486,628	7,547,669	7,547,669	(61,041)	(61,041)	37,420,000
Հիմնանորոգման և պահպանության փորձնական պայմանագիր	-	-	-	-	-	-	5,090,000
Նախագծային ուսումնասիրություն և տեխնիկական հսկողություն	368,244	368,244	1,357,679	1,357,679	(989,435)	(989,435)	4,200,000
Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	5,598	5,598	248,469	248,469	(242,871)	(242,871)	3,190,000
Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը, ներառյալ աուդիտ	-	-	-	-	-	-	1,040,000
Ակտիվների կառավարման ճանապարհային համակարգ և հետազոտման սարքավորումների ձեռքբերում	-	-	80,091	80,091	(80,091)	(80,091)	440,000
Ճանապարհային երթևեկության անվտանգության տեխնիկական աջակցություն	-	-	-	-	-	-	230,000
Տեխնիկական աջակցություն	5,598	5,598	168,378	168,378	(162,780)	(162,780)	1,480,000
Ընդամենը ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	7,860,470	7,860,470	9,153,817	9,153,817	(1,293,347)	(1,293,347)	49,900,000
Ընդամենը	11,273,134	60,988,852	15,580,735	65,833,585	(4,307,601)	(4,844,733)	106,009,375

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ներառում 212,500 ԱՄՆ դոլար սկզբնավճարը:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 11-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Բաղադրիչ Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր
22-DA	3,345,428
24-DA	178,742
25-DA	610,270
Ընդամենը	4,134,440

ՎԶՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Բաղադրիչ Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր
02-DA	1,214,895
4-DA	891,411
Ընդամենը	2,106,306

Հատուկ հաշվի հաշվետվություն

ՎՀՄԲ վարկ 8229-ԱՄ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ		151,292
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն		-
Վարկի համալրում տարվա ընթացքում	3,333,153	
	3,333,153	3,333,153
Նվազեցնել. Հատուկ հաշվից փոխհատուցում Համաշխարհային Բանկին տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		3,484,445
Վերջնական մնացորդ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		369,594
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	3,114,851	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	3,114,851	3,114,851
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		3,484,445
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Հատուկ հաշվի հաշվետվություն

ՎՀՄԲ վարկ 8523-ԱՄ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ		-
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն		-
Վարկի համալրում տարվա ընթացքում	9,475,257	
	9,475,257	9,475,257
Նվազեցնել. Հատուկ հաշվից փոխհատուցում Համաշխարհային Բանկին տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		9,475,257
Վերջնական մնացորդ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2,302,088
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	7,173,169	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	7,173,169	7,173,169
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		9,475,257
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեություն

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» Պետական Հիմնարկի իրավահաջորդը և ստեղծվել է որպես պետական ոչ առևտրային կազակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1304-Ա որոշմամբ:

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ն իրականացնում է կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը» («Ծրագիր»), որը ֆինանսավորվում է 2013թ. փետրվարի 11-ին կնքված 8229-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև:

Ծրագրի նպատակն է ընտրված կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կարողությունը՝ կառավարելու համար կենսական նշանակության ճանապարհային ցանցը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում

- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 147 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների իրականացում:
- Հիմնանորոգման և պահպանության երկու փորձնական պայմանագրերի պայմաններով մոտ 23 կմ երկարությամբ՝ ընտրված կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանություն:
- Ծրագրի շրջանակում հիմնանորոգման աշխատանքների համար մանրամասն նախագծային ուսումնասիրություն, տեխնիկական հսկողություն և անկախ տեխնիկական աուդիտներ:
- Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ դրանց վտանգավոր հատվածների բարելավում:

Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում

- Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը Ծրագրի կառավարման ու մոնիտորինգի համար պահանջվող գործառնական ծախսերի (այդ թվում՝ ֆինանսական աուդիտների) ֆինանսավորման միջոցով:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ծրագրի իրականացում, ի թիվս այլ հարցերի՝ ա) ճանապարհների վտանգավոր հատվածների բարելավման աշխատանքների համար մանրամասն նախագծերի պատրաստում, բ) վերապատրաստման ծրագրեր ՀԱԾՏ-ի անձնակազմի համար, գ) ճանապարհային անվտանգության կրթական ծրագրեր Ծրագրում ընդգրկված գյուղերի դպրոցներում, և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի հետ կապված՝ ճանապարհային երթևեկության անվտանգության քարոզարշավների իրականացում:

- Տեխնիկական աջակցության տրամադրում, ի թիվս այլ հարցերի՝ ա) կատարողականի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ ճանապարհների հիմնանորոգման ու պահպանության համար իրագործելիության ուսումնասիրության իրականացման, այդ թվում՝ առնվազն մեկ ճանապարհային հատվածի նախանշման հարցում, բ) Ծրագրի հետ կապված սոցիալական մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև ճանապարհային ոլորտի ֆինանսական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հարցում, գ) ՏԿՏՏՆ անձնակազմի և տեղական կապալառուների վերապատրաստման հարցում՝ Ծրագրի նոր գաղափարների, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված բազմամյա պայմանագրերի նախագծման ու իրականացման, արդյունավետ նախագծային ստանդարտների և ՏԿՏՏՆ ու ՀԱԾՏ-ի անձնակազմի համար պլանավորման ու պայմանագրերի մոնիտորինգի վերաբերյալ, և դ) ճանապարհային ոլորտում ապագա հնարավոր ներդրումների նախապատրաստման համար պահանջվող տեխնիկական ուսումնասիրությունների իրականացման և մանրամասն նախագծերի իրականացում մշակման հարցում:

Համաձայն 2013թ. փետրվարի 11-ին կնքված 8229-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Հոդված	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (ներառյալ հարկերը)	Հատկացված վարկային միջոցներ (ԱՄՆ դոլարով)
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի գործառնական ծախսեր	80 %	44,887,500
Սկզբնավճար		112,500
Ընդամենը		45,000,000

Սկզբնավճար

Հայաստանի Հանրապետության կողմից վճարվելիք սկզբնավճարը կազմում է վարկային գումարի 0.25%-ը:

Ծրագրի գումարները բաշխված են հետևյալ բաղադրիչների միջև.

Բաղադրիչներ	Բանկի ֆինանսա-վորում (ԱՄՆ դոլարով) (ներառյալ հարկերը)	Կառավա-րության ֆինանսա-վորում (ԱՄՆ դոլարով)	Ընդհանուր արժեք (ԱՄՆ դոլարով)
Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	41,912,000	10,478,000	52,390,000
Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	2,975,500	743,875	3,719,375
Ընդամենը Ծրագրի ծախսեր	44,887,500	11,221,875	56,109,375
Սկզբնավճար	112,500	-	112,500
Ընդամենը	45,000,000	11,221,875	56,221,875

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված նոր Վարկային համաձայնագիրը («Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում») (Վարկ թիվ 8523-AM) ուժի մեջ է մտել 2015թ. օգոստոսի 26-ին՝ տրամադրելով լրացուցիչ ֆինանսավորում՝ 40,000,000 ԱՄՆ դոլար «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի» համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում

- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 360 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների իրականացում:

- Պիլոտային սկզբունքով (ա) հիմնանորոգման և ընթացիկ պահպանման աշխատանքների իրականացում կենսական նշանակության ճանապարհային ցանցի՝ մոտ 23.4 կմ երկարությամբ ընտրված հատված-ներում՝հիմնանորոգման և պահպանման պայմանագրի պայմանների համաձայն և (բ) հիմնանորոգման և պահպանման երկու պայմանագրերի շրջանակներում մոտ 23 կմ երկարությամբ ընտրված կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանություն:

- Ծրագրի շրջանակում հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով մանրամասն նախագծային ուսումնասիրության, տեխնիկական հսկողության աշխատանքների և անկախ տեխնիկական աուդիտի իրականացում:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ (ա) ճանապարհի՝ վտանգավորության բարձր աստիճան ունեցող հատվածների բարելավում, (բ) Ծրագրի շրջանակներում հիմնանորոգված բոլոր ճանապարհներին «Ապահով գյուղերի» իրականացման հետ կապված աշխատանքներ և (գ) ճանապարհային նշանների ձեռքբերում և տեղադրում:

- Թույլատրելի արտակարգ իրավիճակի, ինչպես նաև համաձայնագրում սահմանված պահանջները բավարարելու դեպքում աջակցության տրամադրում՝ թույլատրելի արտակարգ իրավիճակին արձագանքելու նպատակով՝ Վարկառուի

տարածքում ընտրված ճանապարհային հատվածում նախագծման և ներդրումների իրականացման միջոցով:

Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում

- Ծրագրի համակարգման ու իրականացման նպատակով աջակցության տրամադրում ա) Ծրագրի կառավարման ու մոնիթորինգի համար պահանջվող գործառնական ծախսերի ֆինանսավորման միջոցով, ինչպես նաև բ) Ծրագրի ֆինանսական աուդիտի իրականացման միջոցով:

- Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի տեղեկատվական բազայի ձեռքբերում, այդ թվում՝ տեղադրում և ՀԱՃՏ-ի անձնակազմի՝ նշված տեղեկատվական բազայի օգտագործման իմաստով վերապատրաստում, բ) ճանապարհային պայմանների և երթևեկության ուսումնասիրման նպատակով ճանապարհների հետազոտման սարքավորումների ձեռքբերում և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի համար:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ծրագրի իրականացում, ի թիվս այլ հարցերի ա) ճանապարհների վտանգավոր հատվածների բարելավման աշխատանքների համար մանրամասն նախագծերի մշակում, բ) վերապատրաստման ծրագրեր ՀԱՃՏ-ի անձնակազմի համար, գ) ճանապարհային անվտանգության կրթական ծրագրեր Ծրագրում ընդգրկված ապահով գյուղերի դպրոցներում, և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի հետ կապված ճանապարհային երթևեկության անվտանգության քարոզարշավների իրականացում, ե) ճանապարհային երթևեկության անվտանգության գործողությունների ծրագրի մշակում և զ) Ծրագրի Մաս 2 (գ) (ե) կետի ներքո մշակված գործողությունների ծրագրի ընտրված միջոցառումների իրականացում:

- Տեխնիկական աջակցության տրամադրում, ի թիվս այլ հարցերի՝ ա) կատարողականի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ ճանապարհների հիմնանորոգման ու պահպանության համար տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրության իրականացման, այդ թվում՝ առնվազն մեկ ճանապարհային հատվածի նախանշման հարցում, բ) Ծրագրի հետ կապված սոցիալական մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև ճանապարհային ոլորտի ֆինանսական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հարցում, գ) ՏԿՏՏՆ անձնակազմի և տեղական կապալառուների վերապատրաստման հարցում՝ Ծրագրի նոր գաղափարների, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված բազմամյա պայմանագրերի նախագծման ու իրականացման, արդյունավետ նախագծային ստանդարտների և ՏԿՏՏՆ ու ՀԱՃՏ-ի անձնակազմի համար պլանավորման ու պայմանագրերի մոնիթորինգի վերաբերյալ, դ) ճանապարհային ոլորտում ապագա հնարավոր ներդրումների նախապատրաստման համար պահանջվող տեխնիկական ուսումնասիրություն-ների իրականացման և մանրամասն նախագծերի իրականացում մշակման հարցում, ե) կենսական նշանակության ճանապարհային ցանցի համար ռազմավարական զարգացման պլանի մշակում և զ) ճանապարհային ոլորտի համար աղետների ռիսկի իմաստով պատրաստվածության խթանում:

Համաձայն 2015թ. օգոստոսի 26-ին կնքված 8523-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Հոդված	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (ներառյալ հարկերը)	Հատկացված վարկային միջոցներ (ԱՄՆ դոլարով)
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր և վերապատրաստումներ (բացառությամբ Ծրագրի Մաս 1(ե)) և 2 (բ) (ա)-ի	80 %	39,900,000
Սկզբնավճար		100,000
Ընդամենը		40,000,000

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 28:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների միջին թիվը կազմել է 30:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Համապատասխանություն

Համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, Համաշխարհային Բանկի ուղեցույցի, ինչպես նաև 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

ՀՀ դրամը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը: Այս համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Համախմբված ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված հայկական դրամով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (https://clientconnection.worldbank.org) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.94 ՀՀ դրամ: Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.3 Ծրագրի ֆինանսավորում

8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն, տարվա ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

2.4 Ծրագրային ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ոչ ընթացիկ ակտիվներում: Ի հավելումն, ընթացիկ ժամանակաշրջանի ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում: Ի հավելումն, ծախսերի բացվածքն ըստ հոդվածների ներկայացված է ծանոթագրություն 9-ում:

2.5 Կանխավճարներ

Կանխավճարները, որոնք ներառում են դեռևս չստացված ծառայությունների և ապրանքների համար վճարված գումարները, չափվում են անվանական արժեքով:

2.6 Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով:

2.7 Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձին՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն թիվ 8229-AM վարկային համաձայնագրի և թիվ 8523-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. դեկտեմբերի 30-ը:

4 Կանխավճարներ

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Ճանապարհ» ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2015/6)	-	27,218
«Ճանապարհ» ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2015/7)	-	28,821
«Խաչհար» ՍՊԸ (պայմանագրի համար CW-ICB-LRNIP-2015/3)	-	83,850
«Կուառլինի» ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-AF-2016/4)	87,862	-
«Կուառլինի» ՍՊԸ, «Սիսիան Բուատ» ՍՊԸ և «Ավտոճանապարհային տրանսպորտային մեքենաներ» ՓԲԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2015/10)	-	117,004
Սուարդի Ջեյ էս Սի, էյ էյ Բի Ծրագիր և Կոտայք Ար Ի Սի ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/8)	743,846	-
Սուարդի Ջեյ էս Սի և Անդերմոսքոու ԲԲԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/7)	490,199	-
Կապավոր ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/2)	317,194	-
Գավառ ԲԲԸ-ի Ար Բի և Ի և Խաչհար ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/6)	187,628	-
Տեր-Հայրապետյան, Շիհ ՍՊԸ և էյ էյ Բի Փրոջեքթ ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/1)	58,001	-
Շանթ-Սեյրան ՍՊԸ և Կապավոր ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/3)	23,840	-
Սիսիան էֆ Փի էյ Թի ՍՊԸ (պայմանագրի համար CW-NCB-LRNIP-2016/5)	9,873	-
Այլ	22	3,074
	1,918,465	259,967

5 Մնացորդներ բանկերում

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հատուկ հաշիվ (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)	369,594	151,292
Հատուկ հաշիվ (վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)	2,302,088	-
Տեղական հաշիվ (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)	7,430	27,231
Տեղական հաշիվ (վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)	348	-
	2,679,460	178,523

6 Կրեդիտորական պարտքեր

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետերաշխիքային կրեդիտորական պարտքեր կապալառուներին	762,253	674,887
Այլ	269	-
	762,522	674,887

7 Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԾՄՀ ընթացակարգեր	4,134,440	18,209,869
Այլ ընթացակարգեր	1,791,853	22,832,121
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում), զուտ	(2,593,140)	1,816,179
Սկզբնավճար	-	112,500
	3,333,153	42,970,669

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԾՄՀ ընթացակարգեր	2,106,306	2,106,306
Այլ ընթացակարգեր	3,868,951	3,868,951
Հատուկ հաշվի կանխավճար	3,500,000	3,500,000
Սկզբնավճար	100,000	100,000
	9,575,257	9,575,257

Ֆինանսավորման «Այլ ընթացակարգեր» մեթոդով՝ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ -ը պահանջում է կանխավճար և հատուկ հաշվի փաստաթղթավորում՝ կից ուղարկելով այն թույլատրելի ծախսերի վճարումը հավաստող հիմնավորող փաստաթղթերը, որոնց գծով պայմանագրերի արժեքներն ավելին են, քան՝ փոխհատուցումների նամակում նշված սահմանաչափերը, ինչպես նաև այն պայմանագրերի համար, որոնք ենթակա են Համաշխարհային Բանկի նախնական ստուգմանը:

Ֆինանսավորման «ԾՄՀ ընթացակարգեր» մեթոդով՝ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ -ը ներկայացնում է կանխավճարի պահանջ և հատուկ հաշվի փաստաթղթավորում՝ կից ուղարկելով ծախսերի մասին հաշվետվություն (ԾՄՀ):

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ -ը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում հատուկ հաշվին կանխավճարով տրված դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ, ինչը բացահայտված է որպես հատուկ հաշվի կանխավճարի մարում:

8 Կառավարության համաֆինանսավորում

ՎՋՄԲ թիվ 8229-AM վարկային համաձայնագրով նախատեսված բոլոր ծախսերի համար գործում է 20% կառավարության համաֆինանսավորում: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարության համաֆինանսավորումը կազմել է 764,255 ԱՄՆ դոլար:

ՎՋՄԲ թիվ 8523-AM վարկային համաձայնագրով նախատեսված բոլոր ծախսերի համար գործում է 20% կառավարության համաֆինանսավորում: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարության համաֆինանսավորումը կազմել է 1,771,047 ԱՄՆ դոլար:

9 Ֆոնդերի օգտագործում ըստ հոդվածների

Ինչպես նկարագրված է 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերում, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացված են երկու հոդվածով, որից մեկը միավորում է որոշ ենթահոդվածներ: Օգտագործողների հարմարության համար ֆոնդերի օգտագործման բացվածքը ներկայացված է ստորև.

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատանքներ	2,288,511	47,342,588
Ապրանքներ	-	219,352
Խորհրդատվական ծառայություններ	847,109	4,698,985
Գործառնական ծախսեր և վերապատրաստում	277,044	867,457
Սկզբնավճար	-	112,500
	3,412,664	53,240,882

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատանքներ	7,486,628	7,486,628
Խորհրդատվական ծառայություններ	373,842	373,842
Սկզբնավճար	100,000	100,000
	7,960,470	7,960,470

10 Շրջանառու կապիտալի զուտ աճ

ԱՄՆ դոլար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներում աճ	2,500,937	2,679,460
Կանխավճարների աճ	1,658,498	1,918,465
Կրեդիտորական պարտքերի աճ	(87,596)	(762,483)
	4,071,839	3,835,442

11 «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ -ի կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

8229-AM վարկային համաձայնագիր
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ	ՀԲ	Տարբերություն
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր				
	22-DA	4,393,140	4,393,140	-
	24-DA	625,037	625,037	-
	25-DA	908,116	908,116	-
		5,926,293	5,926,293	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում), զուտ				
	21-DA	200,000	200,000	-
	22-DA	(4,193,140)	(4,193,140)	-
	23-DA	1,000,000	1,000,000	-
	26-DA	400,000	400,000	-
		(2,593,140)	(2,593,140)	-
Ընդամենը		3,333,153	3,333,153	-

8523-AM վարկային համաձայնագիր
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ	ՀԲ	Տարբերություն
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր				
	2-DA	2,868,686	2,868,686	-
	4-DA	3,106,571	3,106,571	-
		5,975,257	5,975,257	-
Հատուկ հաշվի կանխավճար				
	1-DA	3,500,000	3,500,000	-
		3,500,000	3,500,000	-
Սկզբնավճար		100,000	100,000	
		100,000	100,000	-
Ընդամենը		9,575,257	9,575,257	-